ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՔՈԼԵՋԻ ՄԱՆԿ. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. No 10 ԿԱՅԱՑԱԾ 10.10 2022 Թ.
ՄԱՆԿ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Գ.Ս.ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՊՈԱԿ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականությունը սահմանում է Աբովյանի պետական էներգետիկական քոլեջում (այսուհետև՝ Քոլեջ) միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, մեթոդների գնահատումն ու մշտադիտարկումը:
2. Քոլեջի նպատակն է ապահովել ուսումնական գործընթացը հիմնվելով դասավանդման և ուսումնառության ընտրության, դրանց գնահատման ու մշտադիտարկման քաղաքականության վրա:
3. Դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակն ամրագրված է 2018-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մեջ և հանդիսանում է Քոլեջի զարգացման հիմնական ուղղություններից մեկը:
4. Սույն քաղաքականության նպատակն է ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, մեթոդների գնահատումն ու մշտադիտարկումը:
5. Դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են դասընթացի սահմանված նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան, որի համար Քոլեջը պետք է կատարի հետևյալ քայլերը.

1) սահմանի կրթական նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները
2) կատարի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն՝ կրթական նպատակներին հասնելու համար.
3) պարբերաբար արդիականացնի դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանեցնելով դրված նպատակներին, ռեսուրսային բազային, ուսանողների մոտիվացիային և այլն:

6. Դասընթացի նպատակները և ուսումնառության վերջնարդյունքներն անհրաժեշտ է դասակարգել ըստ խմբերի կամ տեսակների

1) գիտելիքի տրամադրում և տարածում,
2) ընկալման կարողությունների ստեղծում,

3) գիտելիքների կիրառման կարողության ստեղծում,
4) ուսանողի մոտ վերլուծելու կարողության ստեղծում,
5) համադրման կարողության ստեղծում,
6) գնահատման կարողության ստեղծում:

Անհրաժեշտ է հաշվի առնել դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառելիությունը տվյալ նպատակի իրականացման համար:

7. Դասավանդման մեթոդներն ըստ կրթական նպատակների.
1) Դասավանդման մեթոդները կարող են նկարագրվել որպես ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու միջոց:
2) Դասավանդման մեթոդի ընտրությունը հիմնականում կախված է դասավանդվող առարկայի առանձնահատկություններից և սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից:
3) Ընտրված դասավանդման մեթոդները պետք է լավագույն ձևով ապահովեն ուսումնառության վերնարդյունքների ձեռքբերումը:
8. Դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար անհրաժեշտ է արդիականացնել դասավանդման և ուսումնառության մեթոդները:
9. Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման համար անհրաժեշտ է.
1) ճշգրտել դասընթացի նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները,
2) կատարել ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատում,
3) վերանայել և արդիականացնել դասավանդման և ուսումնառության մեթոդները:
10. Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման հիմնք են հանդիսանում լսարանային բազայի, լաբորատորիաների, վարժահրապարակի, գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների և այլնի արդիականացումը, ուսանողական համակազմի մոտիվացիայի բարձրացումը, վերապատրաստված պրոֆեսորադասախոսական կազմը:
11. Քաղաքականության իրականացումը դասավանդման և ուսումնառության մեթոդների ու մոտեցումների մշակումը, ներդրումն ու կառավարումն է, որը պետք է երաշխավորի, որ սովորողն ուսումնառության ընթացքում ձեռք է բերել մասնագետ դառնալու համար անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ:
12. Դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակման, կիրառման և արդիականացման պատասխանատուները քոլեջի առարկայական հանձնաժողովներն են:

II. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

13. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունն ու արդիականացումը հիմք են հանդիսանում կրթության որակի բարելավմանը և սովորողների մոտ ունակությունների ձևավորմանը:

14. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման նպատակներն են՝

1) ուսումնառության ընթացքում աջակցությունն սովորողին (մշակված մեթոդների միջոցով սովորողի ներգրավում ուսումնական գործընթացում):

2) Դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացումը:

15. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման խնդիրներն են՝

1) յուրաքանչյուր դասընթացի նպատակներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների սահմանում,

2) դասավանդման և ուսումնառության մեթոդների պարբերաբար գնահատում և արդիականացում,

3) դասավանդման գործընթացի որակի բարելավում:

16. Դասավանդման մեթոդները կարելի է բնութագրել որպես դասընթացի ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու միջոց:

17. Դասավանդման մեթոդների ընտրությունը կախված է ՄԿԾ-ի/դասընթացի նպատակներից, սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից, դասավանդման ձևից և սովորողների համակազմից:

18. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը կատարվում է հետևյալ սխեմայով *(ՀԱՎԵԼՎԱԾ 1)*.

1) ՄԿԾ-ի/դասընթացի նպատակի կամ նպատակների սահմանում և հիմնավորում:

2) ՄԿԾ-ի/դասընթացի յուրացման ուսումնառության վերջնարդյունքների սահմանում:

3) Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն ըստ ՄԿԾ-ի/դասընթացի նպատակի և յուրաքանչյուր ուսումնառության վերջնարդյունքի:

4) Սահմանված դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրում:

5) Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության ստուգում՝ հարցումների կազմակերպում շահակիցների շրջանում:

6) Հարցումների արդյունքների հիման վրա վերլուծության իրականացում,

հաշվետվության կազմում և ներկայացում Քոլեջի առարկայական հանձնաժողովների նիստերի քննարկմանը:

7) Որոշումների կայացում և միջոցառումների իրականացում ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացմանը:

8) Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացում ելնելով սովորողի մոտիվացիայի բարձրացումից և տեխնիկական միջոցների արդիականացումից:

III. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

19. *Ցածր-ճանաչողական նպատակներ.* Այս դեպքում առավել ակնհայտ մեթոդը դասախոսությունն է, որը կարող է հանդիսանալ լավագույն մեթոդ, եթե դասավանդողի նպատակն է ապահովել սովորողներին տեսական գիտելիքներով:
20. *Բարձր-ճանաչողական նպատակներ.* տվյալ նպատակների դեպքում անհրաժեշտ է սովորողներին ակտիվորեն ներգրավել ուսուցման գործընթացի մեջ: Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել սովորողին աջակցելու ուսուցման մեթոդներ՝ անհատական հանձնարարականներ կամ խմբային աշխատանքներ (անհատական աշխատանքներ,իրավիճակային խնդիրներ), համապատասխան խմբային ուսուցման մեթոդներ (սեմինարներ, խմբային քննարկում, խաղերի կազմակերպում, ուսումնավարժանք և այլն): Դասընթացը կարելի է կազմակերպել օգտագործելով համապատասխան լաբորատորիաներն ու վարժահրապարակը:
21. *Աֆեկտիվ նպատակներ.* Սա նպատակին հասնելու ամենադժվար տեսակն է: Տվյալ դեպքում կիրառվող դասավանդման մեթոդներ կարող են լինել քննարկումը, խմբային ուսուցման մեթոդները՝ կոնկրետ իրավիճակի քննարկում կամ իրավիճակային խաղերի կազմակերպում, դերային խաղերի միջոցով վարժությունների իրականացում, սեմինարները հետադարձ կապի ապահովումով և այլն:
22. *Միջանձնային նպատակներ.* նման նպատակներին հասնելու ճանապարհներից է սովորողների ակտիվացումը պարապմունքների ընթացքում: Եթե անհրաժեշտ է սովորողի մոտ զարգացնել գրավոր հմտություններ, ապա նրան տրվում է գրավոր առաջադրանք (շարադրություն, ռեֆերատ, հաշվետվություն և այլն):Եթե անհրաժեշտ է սովորողի մոտ զարգացնել բանավոր խոսակցական հմտություններ, անհրաժեշտ է ստեղծել իրավիճակ, որտեղ նա պետք է ցուցաբերի խոսակցական հմտություններ (առաջադրանքի բանավոր ներկայացում, խմբային քննարկում և այլն): Եթե անհրաժեշտ է սովորողի մոտ զարգացնել միջանձնային կամ լիդերության հմտություններ, անհրաժեշտ է ստեղծել իրավիճակ, որտեղ սովորողը պետք է մասնակցի թիմում կամ ղեկավարի թիմը (խմբային աշխատանքներ, իրավիճակային խաղերի կազմակերպում, սեմինար, դերերի փոփոխումով իրավիճակային խաղեր և այլն):
23. *Բազմակողմանի նպատակներ.* այս դեպքում նշյալ մեթոդներն անհրաժեշտ է ինտեգրել:

IV. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

24. Քոլեջում *դասավանդման* և ուսումնառության մեթոդների ընտրությունն ու արդիականացումն իրականացվում է հետևյալ հիմնական մեխանիզմների և մեթոդների կիրառմամբ *(ՀԱՎԵԼՎԱԾ 2)*.

1) դասավանդման մեթոդների ընտրություն սահմանված ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա,
2) դասավանդման մեթոդների ընտրություն դասընթացի նպատակից և դասընթացի ձևից կախված,
3) ընտրություն և արդիականացում առարկայական/մոդուլի ծրագրերի բենչմար քինգի միջոցով,
4) դասավանդման մեթոդների ընտրություն շահակիցների շրջանակում հարցման արդյունքների հիման վրա,
5) դասավանդման և ուսումնառության մեթոդների համար SWOT վերլուծության իրականացում,
6) ընտրություն մշակված դասավանդման մեթոդների ընտրման չափանիշների հիման վրա:

25. Դասավանդման մեթոդների վերանայումը կամ արդիականացումն իրականացվում է հետադարձ կապի մեխանիզմի հիման վրա (հարցումներ, մշտադիտարկում և այլն).

- հետադարձ կապ դասալսումների միջոցով,
- հետադարձ կապ ուսանողների հետ,
- հետադարձ կապ դասախոսական կազմի հետ,
- հետադարձ կապ այլ շահակիցների հետ:

V. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

26. Դասավանդման և ուսումնառության մեթոդների վերանայման և արդիականացման համար անհրաժեշտ է իրականացնել դրանց մշտադիտակումը և գնահատումը:
27. Մշտադիտարկման համար անհրաժեշտ է մշակել գնահատման հստակ չափանիշներ և մշտադիտարկման թերթիկներ:

28. *Մշտադիտարկումը ենթադրում է* քոլեջում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի/մոդուլի ծրագրի ուսումնասիրում, թերությունների վեր հանում և գրանցում:

29. *Գնահատումը ենթադրում է* առարկայի/մոդուլի ծրագրում ներառված դասավանդման և ուսումնառության մեթոդների դասընթացի նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանության ստուգումը և գնահատումը նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների

ՈՒսումնառության վերջնարդյունք		Դասավանդման մեթոդներ	Ուսումնառու-թյան մեթոդներ
Գիտելիք	*Գիտելիքի փոխանցում/ տեղեկատվության ապահովում*	Դասախոսություն Դասախոսության նյութերի տրամադրում	Դասախոսության վերարտադրում Հղում տեսության վրա Գիտելիքի հստակեցում և
Կարողություն և հմտություն	*Ուսանողների ներգրավում դասապրոցեսին*	Քննարկում Հարց ու պատասխան Համագործակցայի ն	Գիտելիքի մեկնաբանում Գիտելիքի հստակեցում տարբեր
	Պրակտիկա	Սեմինարներ Լսարանային ցուցադրում Պրակտիկա	Գիտելիքի հստակեցում Ցուցադրական գիտելիքՓորձի
	Գիտելիքի կիրառում	Լաբորատոր աշխատանք Ներկայացում Իրավիճակային խաղ Խնդիրների լուծում Տարբեր իրավիճակների քննարկում	Տեսության կիրառումը գործնականում Ընբռնման խորացում Գիտելիքների վերարդադրում Գնահատում,